

ՆՎԻՐՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ

ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Պապմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս

«ԱՁԳՆ ԿԱՐԲԵՐՈՍԱՅԵՑԻ ԻՃԻԱՆՈՒԹԵԱՆՆ»

ԱՌԵՐՆԿԱՑԻ ԼՈՒՆՈՒՄԸ

Սերբոսի «Պատմության» Նախերգանքը սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Եւ եղեւ ի նուազիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Դայաստան աշխարհի, ի քառնալ տէրութեանն Վոսմշապուի արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարբեղոմայեցի իշխանութեանն¹: Խորհուրդ ի ձեռն առեալ² ահեղ եւ ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ եւ մեծամեծ քաղեիցն եւ ամենայն գլխաւոր նախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ քառնալ ի Դայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պտուղս»:

Դայ միջնադարյան պատմական երկերում քիչ չեն առեղծվածները, որոնք ծառանում են հետազոտողների առջև առանձին տերմինների, անունների, տեղանունների մեկնաբանման հարցում: Սույն առեղծվածը լուծելու փորձը, սակայն, կարելի է ամենաարտառոցներից համարել: Այնպիսի կարծիքներ են արտահայտվել, բացատրություններ առաջադրվել, մեղմ ասած՝ մեկը մյուսից տարօրինակ ու անհամոզեցուցիչ, ինչու չէ՝ նաև զարմանալի:

Նախքան հարցին անդրադառնալը, հարկ է կանգ առնել այդ առեղծվածային «Կարբեղոմայեցի» բառի գրության ձևին: Սերբոսի «Պատմության» մեզ հասած միակ ձեռագիրը՝ Մատենադարանի թիվ 2639 (1672 թ.) մատյանը, որից 19-րդ դարի կեսին կատարվել են մնացած բոլոր արտագրությունները, տալիս է «Ազգն Կարբեղոմայեցի իշխանութեանն»: «Պատմության» առաջին հրատարակիչ Թադեոս Միհրդատ Տ. Աստվածատուրյան Միհրդատյանցը, օգտագործելով 2639 ձեռագրից 1850 թ. կատարված մի արտագրություն, որտեղ բնագրի

1 «Իշխանութեանն» բառը Զ. Պատկանյանը թարգմանում է «Княжество» /եզակի սեռական/, իսկ Ստ. Սախաշյանցը՝ «род Каркедомской династии». История епископа Себаоса, Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939, с. 26.

2 Ընեն տեքստից պարզ երևում է, որ խոսքը Կարբեղոմայեցի «ազգին» է վերաբերում, Զ. Պատկանյանը վստահ է, որ Սերբոսը նկատի ունի Պարսից արքա Դազկերտ Բ-ին: Տես История императора Иракля. Сочинения епископа Себаоса писателя VII века, перевод с армянского [К. Патканяна], СПб., 1882, с. 22.

«Կարքեդոմայեցի»-ն «ուղղված» էր «Կարքեդոմայեցի» Սեբեոսի «Պատմութեան» իր հրատարակության մեջ, բառը բերում է ահա այս «ուղղված» ձևով: «Պատմության» հետագա բոլոր հրատարակիչները կրկնել են այս «ուղղումը», այդ թվում և Գ. Աբգարյանը՝ իր կազմած քննական բնագրում, որտեղ, ինչպես հետագայում կտեսնենք, ճիշտ՝ «Կարքեդոմայեցի» ընթերցումը որպես սխալ նշված է տողատակ, առանց բացատրության՝ ինչու՞ է հրատարակիչն այդպես վարվել³:

Այդ «ուղղումը», սակայն, կարող էր ուսումնասիրողին տանել թուր ճանապարհով: «...դոմայեցի»-ն դառնալով «...դվմայեցի», հետագոտողին ուղղում է դեպի հունական կամ հունալեզու աշխարհ, ենթադրել տալով, որ գործ ունի Եդարից սկսած հայ թարգմանիչների որդեգրած տառադարձության կանոնների հետ, երբ հունարենի օմեգան (W) տառադարձվում է «ով» (Αἰσωπος - Եզովպոս, 'Ρόμης-Ռոմվմ, խնդրո առարկա ժամանակաշրջանում, հատկապես աստվածաշնչային անձնանուններում և տեղանուններում՝ Μωσῆς - Մովսես, 'Ωσεύς - Ուսաննա, 'Ιωάννης - Յովհաննես, 'Ιωάννης - Յովնան, 'Ιωσήφ - Յովսեփ, 'Ηρώδης - Դերովդես, Σιδών - Սիդովն և այլն, և այլն):

Սեբեոսի «Պատմության» հրատարակիչները, թարգմանիչներն ու հետագոտողները, բնական է, չէին կարող «Կարքեդոմայեցի»-ների կողքով անցնել: Ամեն մեկը փորձել է յուրովի լուծել բառի մեջ թաքնված առեղծվածը, մամանավանդ, որ թեև նախադասությունը հուշում է, թե խոսքն անտարակույս վերաբերում է պարսիկներին, այն տեղիք է տալիս մտաբերելու Քաղկեդոն և Կարթագեն տեղանունները: Ուսումնասիրողների տվյալ հարցի վերաբերյալ հայտնած զանազան կարծիքները բարեխղճորեն շարադրել է Գ. Աբգարյանը՝ վերջում հայտնելով իր սեփական կարծիքն ու բերելով բառի «ճշտված» գրությունը⁴:

Ք. Պատկանյանը Սեբեոսի «Պատմության» իր ուսերեն թարգմանության մեջ նշում է, որ «թեև այս անվան տակ պետք է հասկանալ պարսիկներին, բայց մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այս կոչումը»: Թարգմանիչն անդրադառնում է Հայկզելի վերծանած Պերսեպոլյան արձանագրություններին, որտեղ համդիպում է մինչև վերջինիս ժամանակ դեռևս չվերծանված Karka-ն, որը Հայկզելը համարում է «Ժողովրդանուն» կամ «ցեղանուն», և որի բնական վայրի շուրջ յուրաքանչյուր հեղինակ իր տեսակետն է արտահայտում՝ խալկիսը՝ Մակեդոնիայում, Կարթագենը՝ Աֆրիկայում, Կալանիկեն՝ Ասորեստանում, տեղանուն Վրաստանում, պարթևական խարաքս քաղաքը՝ հիշված Իսիդոր խարաքսացու կողմից: Կարծիք է հայտնվել նաև, որ karka նշանակում է «հույներ»: Ք. Պատկանյանն ուզում է մտաբերել «Շահնամե»-ի Kergesaren-ը, որի «kerga» մասնիկը, ըստ նրա, լիովին համապատասխանում է վերոհիշյալ

3 Թեոդոս մի պահ ենթադրեց, որ «Պատմության» 16-րդ դարի այժմ կորած ձեռագրում «Կարքեդոմայեցի» էր: Բայց ինչպես Ստ. Մալխասյանցն է ցույց տվել, այդ 16-րդ դարը (ավելի որոշակի՝ 1568 թվականը) վերաբերում է ձեռագրում առկա Դակոթ Մոթմանցու աղբյուրին և ոչ՝ «Պատմության»: Բայց կորած ձեռագրում այդ բառի գրության ձևի մասին դատողություններ անելն անելուրջ գործունեք է:

4 Պատմութեան Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 224-227:

«karka»-ին, թեև, ինչպես ցույց տվեց Ստ. Մալխասյանցը, դա Շախգելի կարծիքն էր:

Ստ. Մալխասյանցի «Սեբեոսի Պատմությունը» և Մ. Խորենացի. մատենագրական ուսումնասիրություն» (Թիֆլիս, 1899) գրքի Ս. Կ. սկզբնատառերով ներկայացող գրախոսը փորձ է արել մեկնաբանելու «Կարքեղովմայեցի» բառը: Նախ և առաջ նշելով, որ նման հատուկ ամուս «ոչ մի ուրիշ տեղ» չի հանդիպել, գրում է. «Պարզ է, որ խոսքը Սասանյանց մասին է. ուստի մենք այս բառն այսպես ենք վերլուծում. Պարսք-եղովմայեցի: Եղովմայեցի բառը պետք է լինի ելամայեցի: Որ մեր պատմագիրները ելամ. ելամայեցիք ասելով հասկանում են *Պարսք* (ազգն ու երկիրը) տե՛ս Ասողիկ (Ս. հանդես, Դ, էջ 25), այլ և Երեմիա վարդապետի Բառգիրք Չայոց, էջ 489. «Ելամայեցիք և պարսիկք Աճամստան է»: Ուստի Կարք-Պարսք. գլխատառ Պ և Կ տառերի շփոթություն⁵: Կարծում ենք, որ այս բառը, լուսանցքում իբրև բացատրություն ելամայեցի բառին դրված լինելով, վերջը մի բառ է համարվել. այնուհետև գրչագիր արտագրողին ավելի ծանոթ լինելով Ս. Գրքի *եղովմայեցի* ամուսը, շփոթել է»⁶:

Առեղծվածին անդրադարձավ և Սեբեոսի «Պատմության» ֆրանսերենի թարգմանիչ Ֆ. Մակլերը: Նա գրում է. «Կարքեղովմայեցի»⁷ ցեղանունը թվում է, սասանյան հարստությանը վերագրում է կարթագենյան ծագում: Չայտնի է, շարունակում է Ֆ. Մակլերը. «որ իրականում Չաննիբալը⁸ փախուստի էր դիմել Բյուբանիա՝ Պրուսիաս թագավորի արքունիքը»: Ֆ. Մակլերը հարց է տալիս. «Կարող է դա ելակետը հանդիսանալ այն լեզվաբանների կամ պատմական ավանդությունների, որոնց համաձայն Չաննիբալը սասանյանների նախնին է եղել»: Ֆրանսիացի գիտնականն այս հարցի վերաբերյալ կանգ է առնում Դանիել մարգարեի հայերեն պարականոն «Չայտնության» վրա, որտեղ Կարթագենը և պարսից ժողովուրդը, ըստ նրա, նույնանուն են՝ «Կարքեղովմ և ազգ պարսից»⁹: Դանիել մարգարեի հիշյալ պարականոն «Չայտնության» մասին ավելի հանգամանալից խոսք կլինի սույն հոդվածի վերջում:

Խնդրին անդրադարձավ նաև Ստ. Մալխասյանցը: Նա գրում է. «Բոլոր այս համեմատությունները արժեք չունեն, քանի որ ոչ հնչյունով և ոչ նշանակությամբ չեն հարմարվում Սրտաշիր Սասանյան Ստահրացուն»: Բայց «ազգն Կարքեղովմայեցի իշխանութեան» մի՞թե հիմք է տալիս դրա տակ Սրտաշիր Սասանյան Ստահրացուն տեսնելու: Ստ. Մալխասյանցը,

5 Իսկ «ս»-ի «կորստյան» մասին բացատրություն չկա՞:

6 «Արարատ» ամսագիր, 1899, էջ 315, ծանոթություն:

7 Պահպանում ենք յուրաքանչյուր հետազոտողի և Սեբեոսի Պատմության հրատարակչի սույն բառը ներկայացնելու ձևը, թեև դրա անհրաժեշտությունը չկար. քանզի բոլորն էլ ընդունում են «Կարքեղովմայեցի» գրությունը, և լոկ մենք ենք, որ ճիշտ ենք համարում «Կարքեղովմայեցի»-ն:

8 Կարթագենի՝ հյուսիսային Աֆրիկայում ուղղմական և պետական գործիչ (մ. թ. ա. 247-183): Սահագել է Փոքր Ասիայի Բյուբանիայում: Ըստ Ստրաբոնի և Պլուտարքոսի մոտ պահպանված ավանդության, եղել է Չայաստանում, Սրտաշես Ա-ի արքունիցում, և իր խորհուրդներով օգնել կառուցելու Սրտաշատ քաղաքը:

9 Histoire d'Héraclius par L'Evêque Sebas, traduite de L'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904, p. 156.

չկարողանալով բացատրել «Կարքեղոմայեցին», փորձում է առեղծվածը լուծել քառի մեջ գրչական հնարավոր աղավաղում տեսնելով: «Կարելի է կարծել, - գրում է նա, - թե Կարքեղոմայեցի բառը աղավաղություն է, և սկզբնապես եղել է չար եղովմայեցի»: Անվանի ակադեմիկոսը տալիս է հետևյալ ընդարձակ բացատրությունը: Այսպես. «Ջանի որ մի կողմից հին հայ հեղինակները նայել են Սասանյանների վրա, իբրև հայ Արշակունիների դարավոր ռիսերիմ թշնամիների վրա, և մյուս կողմից Ս. Գրքում հաճախ հիշված եղովմայեցիները, իրենց համարելով եսավի սերունդ, անընդիստ թշնամական հարաբերությունների մեջ էին բուն իրեաների (Յակոբի սերնդի) հետ՝ սրա նմանությամբ Սեբեոս եղովմայեցի է կոչում Սասանյանների՝ հայ Արշակունիների վերաբերմամբ»¹⁰:

Բացատրությունը ծգծգված է, ի վերա ամենայնի հնագրագիտորեն էլ չի հարմարվում: Ինչպե՞ս կարող է «Կ»-ն շփոթվի «Չ»-ի հետ, և ո՞ւր կորավ քառի «ք»-ն: Հնարավոր է ենթադրել միջնադարյան գրչի կողմից անծանոթ քառի հայերեն իմաստավորում կամ ձևում, բայց հակառակը՝ շատ պարզ ու հասկանալի «չար եղովմայեցի»-ն չէր կարող դառնալ նրա համար միանգամայն անհասկանալի «Կարքեղովմայեցի»:

Պատրաստելով Սեբեոսի «Պատմության» իունարեն թարգմանությունը (այն Աթենքում հանձնվել է Կրատարականության դեռևս 1995 թ. վերջին), մենք, բնական է, չէինք կարող չանդրադառնալ «Կարքեղոմայեցի» առեղծվածին, հանգել էիք, սակայն, միանգամայն տարբեր եզրակացության, որը և ստորև ներկայացնում ենք ընթերցողներին և մասնագետներին:



1936 թ. ամերիկյան հնագիտական արշավախումբը ուսումնասիրություններ էր կատարում Իրանի հարավում, Ստահր քաղաքից ոչ հեռու, որտեղ աքեմենյան արքաների դամբարանների հարևանությամբ գտնվում է «Ձրադաշտի քաաբան» ժամանակին մեծ համբավ ունեցող հավանաբար Հրո կամ Անահիտ դիցուհուն նվիրված տաճարը: «Ձրադաշտի քաաբայի» գետնախարսխի (ցոկոլի) վրա հայտնաբերվեցին Շապուի Ա արքայի (241-272 թթ.) և գերագույն քուրմ Կարտիրի արձանագրությունները: Եթե Շապուիի արձանագրությունը դարձավ Իրանի Գ դարի քաղաքական պատմության, պետական կառավարման և դինաստիաների ուսումնասիրության ամենագլխավոր աղբյուրը, ապա Կարտիրի արձանագրությունն այդպիսին դարձավ սասանյան կրոնի և իռգևոր հիերարխիայի ուսումնասիրության համար¹¹: Շապուիի արձանագրությունը եռալեզվյան է՝ պահլավերեն, միջին պարսկերեն

¹⁰ Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, չորրորդ տպագրություն, քաղդատությանը ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթությանը ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 176-177: Ասենք, որ «եղովմայեցի» ընթերցումը Ստ. Մալխասյանցից ճառասուն տարի առաջ առաջարկել էր Ս. Կ.-ն «Արարատ» ամսագրում: Տե՛ս վերը:

¹¹ В. Г. Луконин, Культура Сасанидского Ирана. Иран в III-V вв. Очерки по истории культуры, Москва, 1969, с. 12-14: См. также с. 62, 126.

և հունարեն: Արձանագրության սկզբում, արքայից արքայի տիտղոսաշարից անմիջապես հետո, ուրվագծվում են Երանշահիի «Իրան երկրի» սահմանները: Նրանք ձգվում են հյուսիսում մինչև Կովկասյան լեռնաշղթան և Ալանաց դռները, *արևմուտքում* իրենց մեջ են ներառում ամբողջ Չայաստանը, Իբե-րիան, Կապադովկիան, Կիլիկիան, Եփրատի հոսանքին ընկած նահանգները, *Մեսենեն* (հարավային Սիջագետք), իսկ արևելքում հասնում են մինչև Փեշավար¹²:

Իրանի նեոտորական քրիստոնյաների 410 թ. կայացած եկեղեցական ժողովի արձանագրությունների համաձայն, Սելևկիա-Տիգրանի մեծ մետրոպոլիտը, այն է՝ Իրանի քրիստոնյա համայն եկեղեցու կաթողիկոսը, որին էր ենթակա որպես «մինիստր» Քաշկարի եպիսկոպոսը, իր ենթակայության տակ ուներ հինգ մետրոպոլիտություններ: Նրանք հաստատված էին Բեթ Լապատում (Գունդեշահպուր), Սուսիանայում, Մոքինում, *Մեսենեի Պրատ դը Մայշանում*, Արբալում և Կարթա դը բեթ Սլոքում (Կերկուկ)¹³: Մեսենե նահանգից հյուսիս ընկած էր Էլիմայիսը և Խուզիստանը:

Սասանյան հարստության հիմնադիր Արտաշես Ա-ի (224-241 թթ.) քաղաքաշինության մասին հիշատակող վաղ միջնադարյան աղբյուրները ցույց են տալիս, որ նա կառուցել է Սելևկիան՝ Տիգրիսի ափին (Վեհ Արտաշիր), *Մեսենեն* (Աստրաբադ Արտաշիր), Նոդ Արտաշիր քաղաքը Արբելայի շրջանում և ուրիշներ: Արաբ պատմիչ Տաբարին (9-10-րդ դդ.) գրում է. «Արտաշիրի կողմից հիմնադրվել են Պարսում՝ Արտաշիր Խուրրան..., Ախվազում՝ Որմիզդ Արտաշիրը, Սավադում՝ Բեհ Արտաշիրը, *Աստրաբադ Արտաշիրը* (այն կոչում են նաև Կարթա դը Մայշան)»¹⁴: Նշենք այստեղ, որ Սասանյանների պետության անկումից (651 թ.) հետո, արաբական տիրապետության սկզբնական շրջանում, դեռևս տարածում ունեին Սասանյան շրջանում միջին պարսկերենով գրված գրքերը: Չիշալ գրքերը, այդ թվում Գ-Դ դդ. կազմված «վաթայ-նամակ» խորագիրը կրող պաշտոնական ժամանակագրությունը, արաբ պատմիչների կողմից լայնորեն օգտագործվում էին, և Սասանյան Իրանի մասին նրանց շարադրանքը, հենված լինելով այդպիսի ստույգ աղբյուրների վրա, շատ արժանահավատ է: Արաբ պատմիչ Մասուդին, օրինակ, հաղորդում է 915 թ. Ստահրում տեսած «մի ձեռագրի մասին, որը բովանդակում էր բազում գիտելիքներ և տեղեկություններ պարսից թագավորների և պետական կառավարման մասին»¹⁵: 955 թ. բույիդ ամիրա Ադուդ ադ-Դուլունց այցելեց Աքեմենյանների մայրաքաղաք Պերսեպոլիսը: Այնտեղ նա հրամայեց Դարեհի պալատի դռների վրա արձանագրություն փորագրել, որում ասվում էր, որ իր հրամանի համաձայն Կոզերունի մոզ (Դոռ տաճարի քուրմ) ոմն Մարաֆանդ, իր համար ընթերցեց

12 M. Sprengling, *Third Century Iran, Sapor and Kartir*, Chicago, 1953; E. Honigsmann and A. Maricq, *Recherches sur les Res Gestae Divi Saporis*, Bruxelles, 1953.

13 A. Christensen, *L'Iran sous les Sassanides*, Copenhagen, 1944, p. 271: Լաւլ, *The Cambridge History of Iran. «The Seleucid, Parthian and Sassanian Periods*, Cambridge, 1983, t. 3(2), p. 932.

14 В. Г. Лухонин, *Иран в эпоху первых Сасанидов*, Ленинград, 1961, с.18: Լաւլ, Н. В. Пугулевская, *Города Ирана в раннем средневековье*, Москва-Ленинград, 1956, с. 157.

15 В. Г. Лухонин, *Культура Сасанидского Ирана*, Москва, 1969, С. 9.

այստեղ գտնվող բոլոր արձանագրությունները: Մարաֆանդն ընթերցեց նաև Հապուհ Բ-ի (310-379 թթ.) ժամանակաշրջանին վերաբերող և նույն պալատի ղոնների վրա փորագրված միջին պարսկերեն երկու արձանագրությունները: Իրանում հայտնի են Ժ-ԺԱ դարերին վերաբերող երկու աշտարակներ, որոնց վրա կան միջին պարսկերենով գրված արձանագրություններ և նրանց արաբերեն թարգմանությունները: Հայտնի է նաև վերոհիշյալ թուլիդ ամիրա Ադուդի մեդալիոնը՝ միջին պարսկերեն արձանագրությամբ: Որով անգամ արաբական տիրապետության սկզբից երեք հարյուր տարի անց Իրանում կային մարդիկ, որոնք ի վիճակի էին կարդալ միջին պարսկերենով գրված բնագրեր, որով Սասանյանների մասին արաբ և պարսիկ պատմիչների երկերը հասնում են սասանյան իսկական ավանդության: Հենց այս աշխատություններն էին ուսումնասիրողների հիմնական աղբյուրները վաղ սասանյան շրջանի պատմությունը գրելու համար¹⁶:

Վերադառնալով Երանշահրի արևմտյան շրջանում հիշված Սեսենին: Պարթևները, տիրելով Իրանին մ. թ. ա. Բ դարում, չէին ջանում հասնել մինչև ծով: Նրանց անմիջական տիրույթները կարող էին սահմանակից դառնալ ծովին միայն Եփրատի գետաբերանում, այն էլ փոքր մի տարածության վրա: Ահա այստեղ նրանք թույլ տվեցին փոքր, բայց հարուստ վասալ պետական մի կազմավորման ստեղծման: Շիջանը հունա-հռոմեական աղբյուրներում հայտնի էր որպես Սեսեն (Μεσσην)¹⁷, արաբների շրջանում՝ Մայսան, իսկ պարսիկների՝ Սեշան կամ Մայշան: Դրա գլխավոր քաղաքն էր դարձյալ հունա-հռոմեական աղբյուրների խարաքսը (Χαράξ)¹⁸, որը, անկասկած, պարսիկների Կարքան է: Այս խարաքսից էլ շրջանը կոչվում է հարակենն: Միջազգային առևտրում այս վասալ պետության թագավորներն ավելի մեծ գործունեություն էին ծավալել, քան պարթևների «մեծ արքաները»¹⁹: Շիջանի կենտրոնը, քաղաք-ամրոցը կոչվում էր Karaka da Mésan²⁰: «Կարքա» նշանակում է «քերդ» կամ «ամրացված վայր»²¹, որով Կարքա դը Սեշան (կամ Մայշան) նշանակում

16 Նույն տեղում, էջ 9-10:

17 Այն հիշում է նաև Ստրաբոնը: Страбон, География, перевод Г. А. Страбеновского, Москва, 1964, с. 89 /кн. II, 1, 31:

18 В. В. Бартольд, Сочинения том VII. XI. Ахеменизм и Хузистан, Москва, 1971. Մեսենի մասին ուսումնասիրություն է. J. Saint-Martin, Recherches sur l'histoire et la géographie de la Mésène et de la Chacène Paris, 1838: Ավելի նոր գործերից՝ N. C. Debevoise, A Political History of Parthia, Chicago 1938; U. Kahstedt, Artabanus III und seine Erben, Bern, 1950; E. Honigmann - A. Marieq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953 (Académie Royale de Belgique, Classe des lettres et des Sciences Morales et Politiques, Mémoires t. XLVII, fasc. 4):

19 В. В. Бартольд, ух. соч.

20 The Cambridge history of Iran, vol. 3(1). The Seleucian, Parthian and Sasanian Periods, 1983, p. 487: Ուսալեզու զրականության մեջ քաղաքի անվանումը բերվում է Karaka da Mešwan և Karaka da Mešwan ձևով Հմմտ. В. Г. Луконин, Иран в Эпоху первых Сасанидов, с. 18: Նույնի՝ Культура Сасанидского Ирана, с. 42: Н. В. Пугачевская, Города Ирана в раннем средневековье, с. 50-51, 147, 220: Այս փաստը վկայում է, որ դա ոչ «da» է, ոչ էլ «de», այլ այդ երկուսի միջև առկա հենյուն է: Որով ճիշտ է Զենքրիքի Իրանի պատմության հատորում բերված գրության ձևը՝ «da»: Այն հայերիւմ պիտի լինի «դ»:

21 Н. В. Пугачевская, Города Ирана, с. 139.

է Մեսենեի՝ Մեշանի (Մաշանի) բերդ: Մեսենե-Մեշան-Մաշան նահանգի շրջանում գոյություն ունեին նման Կարքաներ եւ: Վաղ միջնադարում Կերկուկը կոչվում էր Կարքա դը բեթ Սելդը²²: Ըստ ասորական աղբյուրների, Շապուի Բ-ն կառուցեց Կարքա դը Լեդան²³ քաղաքը: Պրոկոպիոս Կեսարացու հիշատակած Μαγδαλασθον (այժմ՝ Թել Սիդդալ) բերդը²⁴ ասորական աղբյուրներում հայտնի է որպես Qaraqia de Magdälaye²⁵:

Ինչ էր ներկայացնում Մաշան-Մեշանը քաղաքական առումով²⁶: Շապուի Ա-ի «Ջրադաշտի քաարա»-ի արձանագրության համաձայն Մաշանում իշխում էր արքայից արքա Շապուի Ա-ի որդի Խամանուն Շապուիը, որ կրում էր Մեշանի թագավոր (MLK') տիտղոսը, իսկ նրանից հետո՝ վերջինիս կին Դենակը²⁷:

Շապուի Ա-ի հաղթական արձանագրության մեջ արքայից անմիջապես հետո հիշվում է Ադիաբենի թագավորը, այնուհետև գալիս են Կերմանի թագավորը և Մաշանի թագուհի Դենակը: Որդի Շապուիը 262 թ., այսինքն «Ջրադաշտի քաարա»-ի արձանագրության կազմման ժամանակ, արդեն վախճանված էր և նրա «թագավորությունը» կառավարում էր իր կին Դենակը²⁸: Դենակի մահից հետո Մեշանի թագավոր դարձավ Ատուրֆարնբազը՝ Շապուի Ա-ի թոռը²⁹: Նա որպես «Մեսենե»-ի թագավոր՝ հիշվում է 293 թ.³⁰:

Շապուի Ա-ի Նաքշ-ի-Ռաջաբի բարձրաքանդակում «արքայից հետո առաջիններից» ներկայացված են իր որդիները, իր կինը, իր գլխավոր մեծամեծները: Արքայից անմիջապես հետո առաջին շարքում պատկերված են «Ֆայոց մեծ արքա» Որմիզդ-Արտաշիրը՝ թագածառանգի նշանով իր քուլախի՝ խույրի վրա: Նրա կողքին՝ Մեսենեի թագավոր Շապուիը՝ Շապուի Ա-ի որդին³¹:

Իրանական արքայազների կալվածները ժառանգական չէին, սակայն *Մեսենեն*, հավանաբար, բացառություն էր կազմում: Շապուի Ա-ի որդի «Մեսենե»-ի թագավոր՝ Շապուիի մահից հետո, ինչպես տեսանք, նահանգը կառավարման հանձնվեց նրա կնոջը՝ Դենակին³²:

Մեսենեն քաղաքական առումով մեծ նշանակություն ստացավ հատկապես Գ դարի 70-90-ական թթ.: Դրա պատճառը Դոռմի հետ Իրանի պատերազմի մեջ ներքաշվելու հնարավորությունն էր:

22 Նույն տեղում, էջ 18, 37, 49, 144, 220:

23 Н. В. Пугачевская, Города Ирана, с. 220.

24 Օտար աղբյուրները Ֆայաստանի և հայերի մասին: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Դրաչ Բարթիկյանի. Երևան, 1967, էջ 178:

25 E. Honigsmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 1071, Bruxelles, 1961, S. 15:

26 Մեսենի մասին պարթևական և սասանյան ժամանակաշրջանում տե՛ս N. C. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938: U. Kahstedt, Artabanos III und seine Erben, Bern, 1950: E. Honigsmann and A. Maricq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953.

27 В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, с. 42.

28 Նույն տեղում, էջ 62:

29 Նույն տեղում, էջ 110:

30 В. Г. Луконин, Иран в III в., Москва, 1979, с. 60.

31 В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, с. 67.

32 В. Г. Луконин, Иран в III в., Москва, 1979, с. 121.

Անդրադառնանք Կարթա դը Մայշանին որպես զրադաշտական կրոնի խոշոր կենտրոնի և սասանյան պետության մեջ զրադաշտական քրմության խաղացած դերին: Կարտիրի պետության գլխավոր քրմի (քրմապետի) Ձրադաշտի քաաբայի ընդարձակ արձանագրության համաձայն, Կարտիրը Մայշանի սահմաններում անձամբ հիմնադրեց կամ իր օժանդակությամբ հիմնադրվեցին Դրո տաճարներ և հաստատվեց «ՄԱԳՈՒՍՏԱՆԸ»՝ մոգաստանը, մոգերի հաստատությունը³³: Այս տաճարներին յուրաքանչյուր տարի զոհաբերվում էին մեկ տարեկան գառներ, մատուցվում գինի և ցորեն: Այդ զոհամատուցումները, դատելով արձանագրություններից, կատարում էր անձամբ արքայից արքան, իսկ տաճարները գտնվում էին նրա հովանավորության ներքո³⁴:

«Ձրադաշտի քաաբա»-ի արձանագրության մեջ Կարտիրը ցույց է տալիս, որ իր ծառայությունների համար արքայից արքա Շապուհի կողմից արժանացավ մուտք գործելու հզոր և գերագույն ՄԱԳՈՒՍՏԱՆԸ³⁵:

Ձրադաշտական հոգևորականությունը կազմակերպվեց խիստ հիերարխիկ: Քրմության գլուխն էր կանգնած գերագույն քուրմը՝ մագուպատան մագուպատը³⁶, տիտղոս, որ ձևվեց «արքայից արքա» տիտղոսի նմանությամբ³⁷: Նա արքունիքում հսկայական ազդեցություն ուներ³⁸: Դատավարությունը գտնվում էր հենց քրմության ձեռքին: Շապուհ Բ-ի իշխանության օրոք եկեղեցի-պետություն հարաբերությունների հաստատման գործընթացը հասավ իր բարձրակետին: Ձրադաշտական հաստատությունը զուգակցվեց միապետության հետ և սեփական հիերարխիայով ունեցավ իր հատուկ տեղը հասարակության մեջ³⁹:

Վերադառնանք Ասեսեն-Մայշան-Մեշան նահանգին և նրա մայրաքաղաք խարաբսին՝ Կարթա դը Մայշանին⁴⁰: Եղիշեն, անդրադառնալով Ավարայրից հետո հայ նախարարների՝ պարսից իշխանությունների կողմից աքսորվելուն, հիշում է և այն վայրերը, որտեղ նրանք տառապել էին: Այսպես, «Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ի ջերմոջ աշխարհին և անդադար էին ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեշովն և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասուրեստան և Խուժաստան»⁴¹: Եղիշեի հիշատակած Մեշովնը, անտարա-

33 «Մագուստանի» Բացատրությունը ըստ M. L. Chaumont-ի. «Magusian»-ը կազմված է magu-stan-ից: «Մագու» նշանակում է մոգ, իսկ «ստան»-ը ածանց է տեղանուններին հատուկ: Գնարավոր է, որ այս տերմինը նախապես աշխարհագրական հասկացողություն էր՝ «մոգերի երկիր», որ անտիկ շրջանի հեղինակները տեղադրում էին Մարաստանում: Սեր դեպերում կասկած չկա, որ խոսքը կրոնական դասին է վերաբերում, որ պահլավական գրքերում կոչվում է asronan – pesak կամ pesak i asronan: M. L. Chaumont, L'inscription de Kartir a la «Kaaba de Zoroastre», «Journal Asiatique», CCXLVIII, 1960, p. 350.

34 В. Г. Луконин, Иран в эпоху первых сасанидов, Ленинград, 1961, с. 17.

35 M. L. Chaumont, L'Inscription de Kartir a la «Kaaba de Zoroastre», p. 345.

36 Գլխավոր մոգպետ-մովպետը:

37 See The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 134:

38 М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М. 1961, с. 289.

39 Նույն տեղում, էջ 140:

40 The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 487.

41 Եղիշեի վասն Վարդանայ և Գայոց պատերազմին: Ի լոյս ընծայեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1958, էջ 188:

կույս, հունա-հռոմեական աղբյուրների Մեսենեն է⁴², արաբական և ասորական աղբյուրների՝ Մեշան (Մայշանը): Է դարի «Աշխարհացոյց»-ում հանդիպում է մեզ հետաքրքրող տեղանվան մասին և մի այլ հիշատակություն: Պարսից «երեսն եւ ութերորդ» աշխարհում հիշվում է «Փոքր աշխարհ» Մեշունը⁴³, որ անկասկած նույնանուն է եղիշեի Մեշովի հետ, ասել է՝ Մեսենե-Մեշան-Մայշանի:

«Աշխարհացոյց»-ի այլ գրչագրերում առկա է հետաքրքիր մի այլ հիշատակություն. «Յաղագս պարսից աշխարհին» գլխում հեղինակը գրում է. «Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս. ա/ Զուստակ-ի-խորուարան, որ է կողմն *Արեմտեայ*, յորում աշխարհք ինն. *ՄԱՅ*, Մասպետան, Միհրան-Զուստակ, *Կաշկար*, Գարմական, Երանասան-Քարտ-Կաւատ, Նոտ-Արտաշիրական, Սարծին, գԱրգուն»⁴⁴: Մայը հիշատակված է այլ գրչագրերում ևս: Այսպես, Մատենադարանի N 582 գրչագրի համաձայն «երեսն եւ եւթերորդ» եղիմացիք են, որ կոչին Զուստ - ի խորասարան, յելից կալով Ղղկաթայ և ի մտից՝ Պարսից. և ռնիին եղիմացիք աշխարհս փոքունս, զայսոսիկ. գ խուժաստան, գ*Մայ*, գՄասպան, գՄիհրանցստակ, գ*Քաշկար*...»⁴⁵:

Արդ, եթե «Աշխարհացոյց»-ում Մայը և Կաշկարը հիշատակված են Պարսից երկրի արևմուտքում, իսկ հայ նախարարները տառապում էին հենց «ընդ Մեշովն և ընդ Քաշկար», ապա տրամաբանական է Մայի և Մեշովն-Մեշունի միջև ընդհանրություն տեսնել: Բայց քանի որ հաստատ չենք կարող պնդել, որ «Աշխարհացոյց»-ի Մայը և Մեշուն-Մեշովնը (նույն տեղանունն է) (ինչպես տեսանք, «Աշխարհացոյց»-ի Մատենադարանի նո. 582 ձեռագրում Մայը հիշատակված է պարսից «երեսն եւ եւթերորդ» աշխարհում, Մեշունը՝ «երեսն եւ ութերորդ»/, մնում է ենթադրել, որ Մեշուն-Մեշովնը Մեսենեն է, նահանգը, Մայը՝ Կարքա դը Մայշանը, նահանգի մայրաքաղաքը (խարաքսը), արաբական աղբյուրների տվյալներով Արտաշիր Պապականի կառուցած Կարքա դը Մայշանը⁴⁶ (Սստրաբոն Արտաշիրը), զրադաշտական հոգևոր կենտրոնը: Ամենայն հավանականությամբ Կարքա դը Մայշանը Սեբեոսը գիտե որպես *Կարքա դը Մայ* (կրճատված է «շան»-ը): Այստեղից էլ ահա նրա «Կարքեղոմայեցի» ազգը, իշխանությունը:

Վերադառնանք Ֆ. Մակլերի կողմից շրջանառության մեջ դրված Դանիել մարգարեի պարականոն «Հայտնությանը»: Ինչպես նշվեց վերևում, ըստ ֆրանսիացի գիտնականի, այնտեղ հիշված Կարթագենը (Հաննիբալի հայրենիքը) և պարսից ժողովուրդը նույնացված են: Կարևոր է նշել, որ սույն պարականոնը, Ֆ. Մակլերի ասելով, ժամանակակից է Սեբեոսին, նշանակում է այդ հանգամանքը ավելի քան կարևոր է Սեբեոսի «Կարքեղոմայեցի» ազգի ինքնությունը որոշելու գործում: Ուրեմն այսպես: Պարականոնի Սեբեոսի ժամանակակից հայ հեղինակը Դանիել մարգարեի բերանով սպառնալիքներ, անեծքներ է թափում պարսիկների վրա: Դանիելի յոթերորդ «Տեսիլքում»

⁴² Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Սիմայանի, Երևան, 1971, էջ 220:

⁴³ Ա. Աբրահամյան, Մնանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 352:

⁴⁴ Ա. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 114-115:

⁴⁵ Ա. Աբրահամյան, հիշ. աշխ., էջ 352: Հրատարակիչը մեզ հետաքրքրող հատվածը վերծանելիս թույլ է տվել բազում սխալներ, որոնց վրա այստեղ իմաստ չունի կանգ առնել:

⁴⁶ The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 487.

լուսորդում ենք. «Կարքեդոնյն և ազգ պարսից, զինչ հասանե քեզ, ի վախճան աւուրց, դու ոչ գիտես, և ի կատարածին յաւիտենից, քանի՞ ինչ եղիցի ժամանակ քո. զկնի ամենայն քաղաքաց և գաւառաց, ի սովոյ ապականեցիր քաղաքդ պաճուճեալ յոսկոյ և յարժաթոյ, և ազգ պճնեալ և զարդարեալ: Անառակութիւնք բազում եղիցին ի քեզ, և տղայք քո չբաւեսցեն ոսկով, և ապա ի սովոյ ապականեցին»⁴⁷:

Նույն՝ յոթերորդ Տեսիլքում մեզ հետաքրքրող ցեղանունը հիշվում է մեկ անգամ նս. «...ի զոգ գազանին երեքաւորեալ յազգէ պարսից ի Կարքեդոնյն»⁴⁸:

Միանգամայն հավանական է, որ պարականոնի հայ հեղինակն արդեն գիտէ, ակնատես է եղել պարսից պետականության վերացմանը խալիֆաթի հարվածների ներքո և տեղի ունեցածը «կանխագուշակում է» Դանիել մարգարեի բերանով:

Ավարտելով սույն հոդվածը, նշենք եզրակացությունը, որին հանգել ենք: Սերբոսի «Պատմության» մեջ «Կարքեդոնայեցի» անվան մեջ և ոչ մի աղավաղում գոյություն չունի, բոլոր «սրբագրությունները» բացարձակապես չունեն ոչ աղբյուրագիտական, ոչ պատմական և, ամենից առաջ, ոչ մի զրջագրական հիմք: Սերբոսն իր առեղծվածային մախադասության մեջ ասում է, որ հայոց Արշակունիների դիմաստիայի վերացումից հետո Դայաստանի վրա հաստատվում է Կարքեդոնայեցվոց ազգի իշխանությունը: Քանի որ այդ իշխանությունը զրադաշտական պարսիկների ազգի իշխանությունն էր, ապա և քաջ գիտենալով, որ նրա գլխավոր սրբավայրը՝ Մագուստանը, Կարքա դը Մայլշան]-ն է, այդ ազգը նա անվանում է Կարքեդոնայեցվոց ազգ: Այդ ազգը «խորհուրդ ի ձեռն առեալ ահեղ և ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ և մեծամեծ քաղեիցը»⁴⁹ և ամենայն զխաւոր մախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Դայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պտուղս»: Աշխարհիկ և կրոնական իշխանությունները նպատակ են դրել Դայաստանից քրիստոնեությունը վերացնել: Սերբոսը, ինչպես ժամանակին եղիշեն (կրկնենք այստեղ նրա ասածը. «...տիրեցին Դայոց ազգն Սասանայ պարսկի որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուցն»), միանգամայն պարզ ցույց են տալիս Սասանյան Իրանում պետության և եկեղեցու միաձուլումն այնպես, ինչպես վերևում հիշված երեքլեզվյան արձանագրությունները և այլ աղբյուրներ՝ արքայից արքա+մագուստան մագուստա:

Կարքա դը Մայլշան]-ի Մոգուստանը, ամենայն հավանականությամբ, այն էր, ինչ մահմեդականների համար Մեքքան, կաթոլիկների համար՝ Վատիկանը, և այլն:

⁴⁷ Թանգարան հին և նոր մատենաց. Ա. Անկանոն գիրք Դին Կտակարանաց, Վենետիկ, 1886, էջ 239: Բացի Ֆ. Մակլերի ֆրանսերեն թարգմանությունից (F. Macler, Les Apocryphes apocryphes de Daniel), Դանիելի պարականոն Դայստությունը երիցս հրատարակել է անգլերեն թարգմանությամբ Դ. Իսավերդենը. The Uncanonical writings of the old Testament found in the Armenian Mas of the Library of St. Lazarus, Venice. Transl. into English by Rev. Dr. Jacques Isasverden, Venice, 1901 (նույնը 1907 և 1934 թթ., նույն տեղում): Մեզ հետաքրքրող հատվածը. «O Carthago and thou peopl of the Persians» (p. 251). «by the Persian peopl of Carthago» (p. 257): Դ. Իսավերդենը հատուկ նշում է, թե իր թարգմանությունը տառացի է, և հայերեն ըմբռնի այս ամբողջ մասը անհասկանալի է» (1934, էջ 257):

⁴⁸ Նույն տեղում, էջ 244:

⁴⁹ Ըստ Բ. Պատկանյանի՝ մոգերի: